ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Կանանց իրավունքների տուն»

հասարակական կազմակերպության 2021 թվականի հուլիսի 19-ի ժողովի որոշմամբ

Նախագահ

Կարինե Դավթյան

**Տպագրված է ընդամենը 2 օրինակ**

**Օրինակ -1**

***ԳՐԱՆՑՎԱԾ Է***

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ*

*ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ*

***03.10.2017թ.***

Գրանցման համար՝ 211.171.976562
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 05545648

03.10.2017թ.-ին գրանցված կանոնադրության

թիվ 1-2 փոփոխությունը գրանցված է

15 06 2022թ.-ին

Աշխատակից՝

Ստորագրություն Անուն, Ազգանուն

**«ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Գյումրի 2022թ.**

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ոչ առևտրային կազմակերպություն է, որում օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք ընդհանուր գաղափարների շուրջ, որն է՝ կանանց իրավունքների շահերի պաշտպանությունը, ընդհանրությունն ու ապահովությունը՝ կամավորության սկզբունքի հիման վրա, հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով, նաև իր շահառուների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, հրապարակայնությունը, խտրականության բացառումը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, իրավահավասարությունը, բարեխղճությունը և հաշվետվողականությունը:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կազմակերպությունը կարող է գործել արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:

1.5. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում, հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

1.6. Կազմակերպության լրիվ անվանումն է՝

- հայերեն՝ «Կանանց Իրավունքների Տուն» հասարակական կազմակերպություն, կրճատ՝ «ԿԻՏ» ՀԿ,
- անգլերեն՝ “Women's Rights' House” Non-Governmental Organization, կրճատ՝ “WRH” NGO,
- ֆրանսերեն՝ Maison du droit des femmes Organisation Non Gouvernementale, կրճատ՝ MDF (ONG),

1.7. Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.8. Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որը բաղկացած է շրջանակի մեջ առնված ձեռքից, որի մեջ կշեռքն է: Շրջանակի մեջ գրված է Կազմակերպության անունը հայերեն և անգլերեն լեզուներով: Ձեռքը նշանակում է կանացի սոլիդարությունը և միասնական պայքարը, իսկ կշեռքը՝ հավասարությունը:

1.9. Կազմակերպությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.10. Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.11. Կազմակերպությունը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:

1.12. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

1.13. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

1.14. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տերյան 94 ^Ա^, բն. 21, հեռախոս՝ +374 60 370 570, էլ. հասցե՝ womensrightshouse.@gmail.com .

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՐԺԵՔՆԵՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության առաքելությունն է՝ օրենքով սահմանված կարգով հասնել մարդու իրավունքների իրացմանը, մասնավորապես նպաստել կանանց համար հավասար, պաշտպանված, բարեկեցիկ և ապահով միջավայրի ստեղծմանը՝ կանխարգելելով նրանց նկատմամբ բռնությունը, խթանելով տնտեսական հզորացմանը և խթանելով նրանց մասնակցայնությանը կյանքի բոլոր ոլորտներում՝ աշխատաշուկայում, ձեռնարկատիրությունում, կրթությունում, առողջապահական, քաղաքական մասնակցության և հարակից ոլորտներում, ինչպես նաև աջակցել քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական համակարգի զարգացմանը, նպաստել համայնքային համակարգի զարգացմանը:

2.2. Կազմակերպության տեսլականն է՝ ունենալ հասարակություն, որտեղ գենդերային հավասարությունն ապահովված է, կանայք պաշտպանված են ցանկացած տեսակի բռնությունից և ունեն հավասար հնարավորություններ և բարեկեցության ապահովման

համար անհրաժեշտ պայմաններ:

2.3. Կազմակերպության արժեքներն են՝

- Պաշտպանվածություն,
- Ապահովություն,
- Հավասարություն,
- Անխտրականություն,
- Համերաշխություն:

2.4. Կազմակերպության գործունեության նպատակներն են՝ օրենքով սահմանված կարգով

- նպաստել կանանց հիմնարար իրավունքների լիարժեք իրացմանը և համայնքի հզորացմանը,
- կանխարգելել նրանց նկատմամբ բռնությունը և պաշտպանել նրանց իրավունքները ոտնահարումներից, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների խախտումներից և շահագործումներից,
- բարձրացնել կանանց իրազեկվածության և գիտելիքների մակարդակը,
- տրամադրել կարիքների վրա հիմնված աջակցություն,
- նպաստել կանանց տնտեսական հզորացմանը,
- խթանել կանանց մասնակցությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում,
- աջակցել մարդու իրավունքների և ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում:

2.5 Կազմակերպության առարկան և խնդիրներն են՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- հայտնաբերել կանանց իրավունքների ոտնահարումներն ու խնդիրները.
- պաշտպանել կանանց իրավունքները, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների խախտումներից.
- հասնել գենդերային հավասարության.
- հասնել կանանց և աղջիկների իրավունքների իրացման, հավասարության, անխտրականության և անվտանգության ապահովմանը.
- կանխարգելել և վերացնել կանանց նկատմամբ և բռնությունը և ցանկացած տեսակի իրավունքների խախտումներն ու խտրականությունը.
- իրականացնել բռնության և իրավունքների խախտումների ենթարկված կանանց, աղջիկների և նրանց երեխաների պաշտպանությունը.

- կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության բոլոր ենթարկված կանանց և աղջիկների ու երեխաների պաշտպանության և նրանց աջակցություն տրամադրելու ուղղությամբ մշակել քաղաքականություններ և միջոցներ.

- տրամադրել իրավաբանական, հոգեբանական և սոցիալական խորհրդատվություններ, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն այն կանանց և աղջիկներին, որոնք ունեն դրա կարիքը և/կամ ենթարկվել են ընտանեկան բռնության և/կամ խոշտանգումների և անհավասար վերաբերմունքի և/կամ խտրականության՝ պայմանավորված սեռով, սոցիալական դիրքով, դավանանքով, սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ և/կամ այլ հատկանիշով: Իրականացնել վերջիններիս շահերի պաշտպանությունը պետական մարմիններում,- ներպետական և միջազգային դատարաններում.

- բարձրացնել կանանց իրազեկվածության և գիտելիքների, իրավագիտակցության մակարդակը, կազմակերպել և իրականացնել նրանց գիտելիքների զարգացմանն ուղղված խմբակներ և միջոցառումներ.

- ստեղծել կրթական, տեղեկատվական, ռեսուրսային կամ գործընկերային կենտրոն, որը կտրամադրի խորհրդատվություն, այլ միջոցառումներ.

- մասնակցել պետական, տեղական մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորմանը և կատարելագործմանը.

- նպաստել կանանց և ընտանեկան բռնության վերաբերող օրենսդրության կատարելագործմանը.

- աջակցել դատաիրավական համակարգի զարգացմանը.

- նպաստել օրենսդրության կատարելագործմանը.

- աջակցել տարածաշրջանում խաղաղաշինական գործընթացներին.

- աջակցել մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը.

- աջակցել քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական համակարգի զարգացմանը.

- աջակցել մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը, լավ կառավարման կառուցակարգերի ներդրմանը և ամրապնդմանը.

- իրականացնել կանանց հարցերին վերաբերող ակտիվ գործունեություն առողջապահության, մշակույթի, կրթության, գիտության, սոցիալական և այլ ոլորտներում, իրականացնել կանոնադրությունից բխող այլ գործառույթներ:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

3.1 Կանանց իրավունքների պաշտպանությունը և ջատագովությունը նրանց նկատմամբ ընտանեկան/սեռական բռնության կանխարգելումը,

3.2 Կանանց կարողությունների և ներուժի զարգացումը, առավելապես շեշտադրելով նրանց տնտեսակա հզորացման և ֆինանսական անկախության ձեռքբերման վրա՝ խթանելով կանանց մուտ աշխատաշուկայում, ձեռնարկատիրական ոլորտում, կրթական համակարգում, ինչպես նաև կանա համար նոր մասնագիտությունների ձեռքբերման հնարավորությունների ընձեռնումը և բոլոր ոլորտներո կանանց աշխատանքային և այլ իրավունքների մասին իրազեկվածության և իրավագիտակցությ

մակարդակի բարձրացումն ու իրավունքների պաշտպանությունը:
3.3 Կանանց մասնակցության խթանումը քաղաքական որոշումների կայացմանը, հատկապես տեղական մակարդակում:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված առաքելությունը, արժեքները, գործունեության առարկան և նպատակները:
4.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին:
4.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է գործադիր մարմինը՝ իր կողմից հաստատված կարգով:
4.4. Կազմակերպության անդամների թիվը չի կարող գերազանցել 30-ը (երեսուն):
4.5.Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի հիման վրա:
4.6. Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում Ժողովի որոշմամբ՝ անդամների ձայների 2/3-ով, եթե նա ծավալել է կազմակերպության կանոնադրական նպատակներին հակասող կամ դրանց իրականացմանը խոչընդոտող գործունեություն, ով պարբերաբար խախտում է սույն կանոնադրությամբ նախատեսված դրույթները, և/կամ իր վարքագծով և/կամ խոսքերով արատավորել է Կազմակերպության համբավը: Վերստին անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով կարող է հեռացվել անդամությունից:
4.7. Կազմակերպության այն անդամը, որը, Ժողովի կողմից սահմանված լինելու դեպքում, չի վճարել տարեկան անդամավճար, Ժողովի որոշմամբ հեռացվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
5.1.1. Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում.
5.1.2. Ներկա գտնվել Ժողովին նիստին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նստերին.
5.1.3. Կազմակերպության գործադիր մարմնի կողմից սահմանված դեպքերում և կարգով օգտվել նրա ծառայություններից, ինչպես նաև մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին.
5.1.4. Ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
5.1.5 Ըստ վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների

որոշումները: Գործադիր մարմնի և ժողովի որոշումների բողոքարկումն անդամների կողմից իրականացվում է վերադասության կարգով: Անդամի կողմից բողոքարկումն իրականացվում է դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է ընդհանուր Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով:
5.1.6. Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին.
5.1.7. Իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:
5.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

- կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.
- բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.
- նպաստել Կազմակերպության հեղինակության բարձրացմանը.
- վճարել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ տարեկան յոթ հազար ՀՀ դրամի չափով, մաս-մաս վճարելու իրավունքով, ինչպես նաև աջակցել կազմակերպության անդամների համալրմանը:

5.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ գործադիր մարմնի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ Ժողովը և գործադիր մարմինը:
6.2. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:
6.3. Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է երեք տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է գործադիր մարմինը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր մարմինը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 20 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:
6.4 Կազմակերպության հերթական նիստը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից՝ անդամների համատեղ հավաքի ձևով, կամ եթե դա հնարավոր չէ՝ հեռակա կարգով: Այն կարող է կատարվել հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր մարմինը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 20 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Խորհրդի անդամներին և կառույցներին:
6.5. Կազմակերպության Ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է գործադիր մարմնի կամ

Կազմակերպության անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ:
6.6. Կազմակերպության Ժողովի արտահերթ նիստը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:
6.7. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- Կազմակերպության կանոնադրության հաստատումը, փոփոխումը, լրացում կատարելը և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը.
- Կազմակերպության ներքին քաղաքականությունների հաստատումը.
- Կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը, փոփոխումը և ետ կանչումը.
- Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը.
- Այլ իրավաբանական անձ, կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը.
- Կազմակերպության կառուցվածքի հաստատումը.
- Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը:

6.8. Ժողովի իրավասության հարցերի մեջ են մտնում նաև՝

- Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն սահմանված լինելու դեպքում վարձատրության կարգի և պայմանների սահմանումը.
- Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է աուդիտի.
- Կազմակերպության մարմինների գործունեության հաշվետվությունների հաստատումը, երեք տարին մեկ անգամ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման Կազմակերպության նախագահի կողմից հաստատված տարեկան հաշվետվությունների հաստատումը.
- Կազմակերպության անդամի հեռացումը անդամությունից.
- Անդամավճարի չափի և վճարման կարգի սահմանումը.
- Օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

6.9. Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Ժողովի բոլոր անդամների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են Ժողովի բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 4.6. կետով նախատեսված դեպքի: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են հինգ տարի:
6.10. Գործադիր մարմինն ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամանակով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:
6.11. Գործադիր մարմնի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:
6.12. Գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝
6.12.1. ապահովում է Ժողովի որոշումների կատարումը.
6.12.2. մինչև հինգ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ հինգ միլիոնից ավելի արժողությամբ ցանկացած գույք Ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում է Կազմակերպության

գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից.
6.12.3. ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
6.12.4. տալիս է լիազորագրեր.
6.12.5. բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
6.12.6. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
6.12.7. հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.
6.12.8. հաստատում է Կազմակերպության մարմինների հաշվետվությունները, Ժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք երեք տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը.
6.12.9. հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
6.12.10. ընդունում է Կազմակերպության անդամ.
6.12.11. իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:
6.13. Գործադիր մարմինն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:
6.14. Գործադիր մարմինը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:
7.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:
7.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝
7.3.1 կազմակերպության անդամների դրամական և նյութական ներդրումները, մուտքավճարները և անդամավճարները,
7.3.2 բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը, ներդրված ավանդներից ստացված եկամուտները,
7.3.3 դրամաշնորհները, նվիրաբերությունները,
7.3.4 բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
7.3.5 Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,
7.3.6 Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
7.3.7 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը,
7.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար և չեն կարող բաշխվել անդամների միջև:

## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:
8.2 Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:
8.3 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

«ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՊԱՏԿԵՐԸ

Սույն կանոնադրությունը կազմված է 19.07.2021թ.-ին:


51